

16504

# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԿ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԿՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԶՈՐՐՈՐԿ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄԻՆԻ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՄԱՐՏ 15, 1931

ՔԵՑՄՊՐԻՃ

361  
Հ-20

ԿԱՆՈՆԱԳՐԷՆ ՄԻ ՔԱՆԻ  
ԿԱՐԵՒՈՐ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԳՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Նպատակն է Հայաստանի մէջ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳԻ մը հիմնել:

1.- Տուներ շինելով յարմար հողի մը վրայ, եւ հոն տեղաւորել մասնաւորապէս Խարբերգ Գաւառի Հայեր:

2.- Ճարտարարուեստներու հաստատումով անոնց դործ ստեղծել:

Միութեան կրնան անդամակցել Խարբերգ Գաւառի Հայեր՝ վճարելով 1 տոլար մուտք եւ 2 տոլար տարեվճար:

Մասնաճիւղեր կրնան կազմուիլ Հայ դպրութիւններու մէջ՝ պայմանաւ որ անդամներու թիւը առնուազն 5 ըլլայ:

Դրամական գործառնութեան պատասխանատու է Կեդրոնական Գործադիր Մարմինը հաւաքաբար:

Գանձապահը 2000 տոլար երաշխաւորութեան տակ է իր պաշտօնէութեան ամբողջ շրջանին:

Ուսումնասիրաց Ընկերութիւններէ ստացուած գումարները անձեռնմխելի են եւ պիտի գործածուին Հայաստանի մէջ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳԻ շինելու համար միայն: Իսկ Միութեան տեղական ծախքերը պիտի հոգացուին Միութեան ջանքերովը գոյացած ուրիշ դրամներէ:

Որքան ատեն երեք մասնաճիւղեր գոյութիւն ունենան, Միութիւնը իր գործը կը շարունակէ, հակառակ պարագային Միութիւնը կը լուծուի եւ գրանուած բոլոր գոյքերն ու դրամները կը յանձնուին Հայաստանի օրուան կառավարութեան գործածուելու Միութեան նպատակին համար:



62708 ախ  
1449-35  
2010

Ա.

ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԳՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԶՈՐՐՈՐԳ  
ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Գումարեալ  
Ի Քէյմպրիճ, Մարտ 15, 1931, Կիրակի  
Կէսօրէ վերջ ժամը 1-էն սկսեալ

Համա-Խարբերգիական Միութեան Զորրորդ Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ Մարտ 15, 1931, Կիրակի, Պօրտ ալ Թրէյտ Պիլաինկի մէջ, Քէյմպրիճ:

Միութեան ատենապետը, Տօքթ. Յ. Մովսիկեան, ստուգելով որ ներկաները կը կազմէին մեծամասնութիւն, Ժողովը բացուած յայտարարեց:

Պատգամաւորներու ցանկը հետեւեալն էր.

- ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ ԿՈՂՄԷՆ՝
  - 1.- Յարութիւն Խօլիկեան
- ՊՈՍԹՈՆԷՆ՝
  - 2.- Յովսէփ Գրիգորեան
  - 3.- Յարութիւն Սողիկեան
  - 4.- Խաչատուր Ոսկերիչեան
- ՈՒՍՏՐԷՆ՝
  - 5.- Կարապետ Թաշնեան  
Խորհրդական՝ Գառնիկ Աղեփսանդրեան
- ՆԻՒ ԵՈՐՔԷՆ՝
  - 6.- Գ. Մ. Դանիէլեան
- ԼԻՆԷՆ՝
  - 7.- Յարութիւն Գ. Յարութիւնեան  
Խորհրդական՝ Աբրահամ Տէրտէրեան
- ԼՕԶ ԷՆՃԵԼԸՍԷՆ՝
  - 8.- Յովհաննէս Սողիկեան
  - 9.- Միսաք Տէր Պաղտասարեան

2002

Կեդրոնական Գործադիր Մարմինի ամբողջ կազմը ներկայ էր, ի բաց առեալ Գրիգոր Կէօկէրեան:

Պատգամաւորական ժողովը բաց ըլլալով հանրութեան՝ հետաքրքիր Սարբերդցիներ նաեւ ներկայ էին :

Իսկ հրաւիրեալ Ուսումնասիրացներէն ներկայ էին Քեսի-  
րիկի Ընդհանուր Միութեան, Հիւսէյնիկի Վերաշինաց Միու-  
թեան, Սարբերդի Կրթասիրացի, Իջմէի Միացեալ Ընկերու-  
թեան եւ Հապուսիի Հայրենասիրացի ներկայացուցիչները :  
Անպաշտօն կերպով ներկայ էին նաեւ Բաղմաչէնի, Սոյլուի եւ  
Փէրէնճի Ընկերութիւններու անդամներէն :

**ԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԱԾ ՕՐԱԿԱՐԳՆ ԷՐ՝**

**ՆԻՍ ԱՌԱՋԻՆ**

- 1.- Յանձնարարականներու վաւերացում :
- 2.- Օրուան դիւանի ընտրութիւն :
- 3.- Նախորդ Պատգամաւորական ժողովի Արձանագրութեան ընթերցում :
- 4.- Կեդրոնական Գործադիր Մարմինի Տարեկան Տեղեկագիրը :
- 5.- Գանձապահին Հաշիւը :
- 6.- Յանձնախումբերու ընտրութիւն — Հաշուեքննիչ, Հարցեր Գասաւորող եւ Ընտրական :

**ՆԻՍ ԵՐԿՐՈՐԴ**

- 1.- Նախորդ նիստի արձանագրութեան ընթերցում եւ վաւե-  
րացում :
- 2.- Մասնաձեւերու տարեկան տեղեկագիրները :
- 3.- Մասնաձեւերէ եկած հարցեր :
- 4.- Օժանդակող ընկերութիւններու առանձնաշնորհումներու  
մասին թեւադրութիւններ :
- 5.- Ընտրութիւն Կեդրոնական Գործադիր Մարմինի :

**ՆԻՍ ԱՌԱՋԻՆ**

**1.- ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԱԻԵՐԱՑՈՒՄ ԵՒ  
ՕՐՈՒԱՆ ԴԻԻԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Պատգամաւորներու յանձնարարականները օրինաւորապէս  
վաւերացուելէ վերջ՝ ձեռնարած քուէով ընտրուեցաւ Գ. Մ.  
Դանիէլեան՝ ա՛յկա, եւ Մ. Տէր Պաղտատարեան՝ ա՛ղալի :

Գ. Մ. Դանիէլեան մի քանի հակիրճ բառերով իր շնոր-  
հակալութիւնը յայտնեց իրեն ցոյց տրուած պատիւին եւ վըս-  
տահութեան, եւ անմիջապէս անցաւ օրակարգի խնդիրներուն :

**2.- ՕԺԱՆԴԱԿՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑՆԵՐՈՒ  
ԱՌԱՋՆԱՇՆՈՐՀՈՒՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ**

Նկատելով որ Օժանդակող Ընկերութիւններ ամէնն ալ, ի  
բաց առեալ Հողէի Ուսումնասիրացը, ունէին ներկայացուցիչ-  
ներ ժողովին խորհրդակցութեանց մասնակցելու, յարմար  
տեսնուեցաւ երկրորդ նիստի 4-րդ հարցը նախ վեր առնել ճշ-  
դելու անոնց իրաւունքները ներկայ ժողովին մէջ :

Հարցը այն էր թէ օժանդակող ընկերութիւններ ի՞նչ ա-  
ռանձնաշնորհումներ կրնային վայելել :

Այլեւայլ թեր ու դէմ դադափարներու փոխանակումէ  
վերջ՝ առաջարկուեցաւ անոնցմէ քուէատու ներկայացուցիչ-  
ներ ունենալ ամէն մէկ Պատգամաւորական ժողովի մէջ : Այս  
առթիւ հետեւեալ բանաձեւը առաջարկուեցաւ եւ ընդունուե-  
ցաւ Պատգամաւորներու կողմէն, որուն հակառակ էր սակայն  
Լօղ Էնճըլէսի պատգամաւորներէն Յովհաննէս Սողիկեան :

«Սարբերդ Գաւառի այն ուսումնասիրացները որոնք առ-  
նուազն 1200 տոլարով օժանդակած են ՀԱՄԱ-ՍԱՐԲԵՐԴԳՅԻԱ-  
ԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ, իրաւունք ունին ԵՐԿՐՈՒ պատգամաւորներ  
տալու Միութեան Տարեկան Պատգամաւորական ժողովին» :

Քուէարկուեցաւ այս որոշումի գործադրումն սկսիլ նոյն  
օրը : Հետեւապէս հետեւեալ անձինք աւելցան պատգամաւոր-  
ներու ցանկին վրայ :

- ԵՍԱՐԲԵՐԴԻ ԿՐԹԱՍԻՐԱՑԻ ԿՈՂՄԷՆ՝
- 10.- Կարապետ Ղազարոսեան
  - 11.- Յակոբ Մխնեան
- ՀԻԻՍԷՅՆԻԿԻ ՎԵՐԱՇԻՆԱՑ ՄԻՈՒԹԵՆԷՆ՝
- 12.- Միհրան Գգիրեան
  - 13.- Յակոբ շանիկեան
- ՔԵՍԻՐԻԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵՆԷՆ՝
- 14.- Յակոբ շօրճօրեան
  - 15.- Մարտիրոս Տէր Յովհաննէսեան
- ԻՋՄԷԻ ՄԻԱՑԵԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ՝
- 16.- Յարէք Մ. Փիլիպպոսեան

**3.- ՆԱԽՈՐԴ ՊԱՏԳԱՄԱՍԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

Նախորդ Պատգամաւորական ժողովի արձանագրութիւնը  
կարգացուեցաւ առ ի դիտութիւն :

**ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ 1930-1931 ՇՐՋԱՆԻ**

Այդ ժողովին մէջ տրուած էին հետեւեալ որոշումները.  
 ա. - Գործիչ ունենալ Ամերիկայի մէջ: Գործադրուած:  
 Կարճ ժամանակէ վերջ գործիչը հրատարակած:  
 բ. - Ներդադիւր վուլթացիներ: Հետապնդուած: 45 անձանց  
 ներդադիւր վաւերացուած Մոսկուայի կառավարութիւնէն:  
 գ. - Ճարտարարուեստի հաստատում ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ մէջ:  
 ի. - Հայաստանի ներկայացուցիչները յարմար տեսած էին միայն  
 դիւղատնտեսութիւնը Նոր Խարբերդիներու համար:  
 դ. - Դպրոցի շինութեան ձեռնարկել: Յառաջ տարուած  
 էին բանակցութիւնները Միութեանս եւ Հ. Բ. Ը. Միութեան  
 միջեւ ծանօթ կտակի մասին: Ըսուեցաւ որ Բարեկործականի  
 Ամերիկայի Երջանային Յանձնաժողովը Միութեանս խնդիրը  
 պահանջը օրինակոր դտած ըլլալով՝ անոր անմիջական գոր-  
 ծադրումը թելադրած էր Բարիզի Կեդրոնական Վարչութեան:

**4. - ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ  
 ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ**

Միութեան Ընդհանուր Գարտուղարը, Յարէթ Մ. Փիլիպ-  
 պոսեան, կարգաց Կեդրոնական Գործադիր Մարմինի վերջա-  
 ցող տարեշրջանի գործունէութեան տեղեկագիրը: Տես էջ 9:  
 Տեղեկագրի ընթերցումէն վերջ՝ պատգամաւորներ միա-  
 ձայնութեամբ յայտնեցին իրենց զնահատութիւնը թափուած  
 աշխատանքներու համար:

**5. - ՀԱՇՈՒԵՑՈՒՈՒԹԻՒՆ**

Մարդիս Կօչկարեան, Միութեան Գանձապահը, ներկայա-  
 ցուց տարեկան հաշիւը: Տես յաջորդ երեսը:

**6. - ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Աթոռին իրաւունք տրուեցաւ նշանակելու յանձնախում-  
 բեր:

Հաշուեմնիչ Յանձնախումբի անդամներ՝

- ա. Մարտիրոս Տէր Յովհաննէսեան
- բ. Կարապետ Ղազարոսեան
- գ. Կարապետ Թաշեան

Հարցերը դասաւորող եւ ընտրակամ յանձնախումբի ան-  
 դամներ՝

- ա. Միհրան Գդիրեան
- բ. Յարութիւն Գ. Յարութիւնեան
- գ. Յովսէփ Գրիգորեան

**ՄՈՒՏԻ**

Նախորդ շրջանէն	4,025.73
Գանձումներ	
Պոսթոն	1,028.53
Նիւ Նօրթ	879.50
Ուտոր	473.50
Լօղ Էնճըլըս	290.75
Հարթֆըլտ	283.50
Տիթթոյթ	252.08
Փրալիտէնս	100.00
Լին	100.00
Շիքսիօ	100.00
Լօվէլ	38.00
Վուեսաքէթ	13.00
Տօկոս	22.79
Տարեգիրքերէ	2.50
Պարտք մը դանձուած	100.00
Ընկերութիւններէ	
Հիւսէյնիի Վերաշ. Մի-	
ութիւն	1,200.00
Բեպիբիի Ընդհանուր Մի-	
ութիւն	1,200.00
Խարբերդի Կրթասիրաց	
եւ Նպաստ. Ընկ.	1,200.00
<b>Համագումար</b>	<b>11,309.88</b>

**ԵԼԻ**

Հայաստան դրկուած	7,625.79
Գարտուղարութեան	1,855.00
Շահան Նաթալիի	443.02
Գոյքեր	304.50
Ճամբորդութիւն	198.01
Տպագրութիւն	190.99
Մանուցումներ	85.68
Գըթեր	35.25
Փօսթի ծախք	20.61
Մաղկեպակներ	20.00
Հեռագիրներ	11.63
Գրեկական պիտոյքներ	8.30
Սրահի վարձք	6.50
Քէյպըլ Էտրէս	5.00
Գօնտ դանձապահին համար	5.00
Այլեւայլք	20.00
Պարտք տրուած	100.00
<b>Համագումար</b>	<b>10,935.90</b>
Գանձը կը մնայ	373.98
<b>Կշիտ</b>	<b>11,309.88</b>

Այս հաշուեցոյցին քննութիւնը թողուեցաւ Հաշուեքննիչ  
 Յանձնախումբին: Իսկ հաշուեցոյցի մասին ըլլալիք դիտողու-  
 թիւները՝ ձեռնարկ յաջորդ նիստին, երբ Յանձնախումբը  
 պատրաստ պիտի ըլլար տեղեկագիրը ներկայացնելու:

Առաջին նիստը լրանալէ առաջ պատեհութիւն տրուեցաւ  
 Բազմաչնիի, Հասպուսիի, Փէրլէնճի եւ Խոյլուի Ուսումնասի-  
 րացներու ներկայացուցիչներուն եւ անդամներուն յայտնելու  
 իրենց տպաւորութիւնները եւ տեսակէտները:

Արտայայտուած մտքերը Միութեան գործունէութեան  
 շուրջ բարեկամական եւ քաջալերական էին, եւ ցոյց կուտա-  
 յին որ շատ չանցած ուսումնասիրաց ընկերութիւններէ ոմանք  
 նաեւ պատրաստ պիտի ըլլային հասցնելու դրամական օժան-  
 դակութիւն՝ արագցնելու ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ շինութիւնը:

Առաջին նիստը փակուեցաւ ժամը 5:30-ին:

## ՆԻՍ ԵՐԿՐՈՐԴ

Երկրորդ նիստը բացուեցաւ ժամը 6:30-ին՝ մէկ ժամ դա-  
դարէ վերջ:

Բոլոր պատգամաւորները ներկայ էին ի բաց առեալ Յ.  
Ճօրճօրեան որ ստիպուած էր մեկնիլ՝ իր ձայնը տալով Արամ  
Եաղճեանի:

Այս նիստին օրակարգն էր յաւելեալ հարցերով միասին,  
հետեւեալը զոր Հարցեր Դասաւորող Յանձնախումբը ներկա-  
յացուց.

- 1.- Նախորդ նիստի արձանագրութեան ընթերցում եւ վաւե-  
րացում:
- 2.- Մասնաճիւղերու տեղեկագիրները:
- 3.- Երիտասարդաց եւ կանանց մասնաճիւղերու կազմութիւն:
- 4.- Հաշուեքննիչ Յանձնախումբի տեղեկագիրը եւ պիւտոճէլի  
հարց:
- 5.- Կանոնադրի փոփոխութիւն:
- 6.- Խարբերոյցներու մարդահամարը:
- 7.- Ընտրութիւն Կեդրոնական Գործադիր Մարմինի:
- 8.- Գնահատում եւ շնորհակալութիւններ:

1.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ ԵՒ ՎԱԻԵՐԱՅՈՒՄ  
Նախորդ նիստի արձանագրութիւնը կարգացուելով նոյ-  
նութեամբ վաւերացուեցաւ:

2.- ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐԸ  
102 ԷՆՃԼԼԸՍԻ մասնաճիւղը բացառաբար յառաջ տարած  
էր Միութեան դործերը խիստ կանոնաւորութեամբ եւ ճշգր-  
պահութեամբ եւ զրկած էր §290.75:

ՊՈՍԹՈՆԻ մասնաճիւղը ունեցած էր երեք մեծ ձեռնարկ-  
ներ, եւ ապահոված էր մեծադոյն գումարը՝ §1028.53:

ՆԻԻ ԵՕՐՔԻ մասնաճիւղը կազմած էր Երիտասարդներու  
Հատուած մը: Ղրկած էր յաջորդ բարձրագոյն գումարը՝  
§875.50:

ԼԻՆը զրկած էր 100 տուրք՝ հակառակ տնտեսական ծանր  
տագնապին, եւ ունէր վանձին մէջ 100 տուրքէն աւելի գու-  
մար մը:

ՈՒՍՏՐը ունեցած էր յաջորդ դաշտահանդէս մը: Ղրկած էր  
§473.50:

ՀԱՐԹՅԸՐՏԻ յաջող դաշտահանդէսին զուտ հասոյթը ե-  
ղած էր §257.50:

3.- ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՕԺԱՆԳԱԿ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ  
Որոշուեցաւ կազմել Երիտասարդաց եւ Կանանց Օժանդակ  
Մասնաճիւղեր: Այս որոշումին գործադրութիւնը թողուեցաւ  
նորընտիր Կեդրոնական Գործադիր Մարմինի:

4.- ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ ԵՒ ՊԻԻՏՃԷ

Հաշուեքննիչ Յանձնախումբը տեղեկագրեց որ հաշիւները  
մանրակրկիտ քննութեան ենթարկելէ վերջ՝ ճիշդ գտած եւ  
վաւերացուցած էր:

Սակայն ժողովը հաշուեկշիռի յարուցած մէկ խնդիրը,  
այն է պիւտոճէլի խնդիրը, վեր առաւ, եւ երկար վիճարանու-  
թիւններէ վերջ հետեւեալ բանաձեւը մեծամասնութեամբ վա-  
ւերացուց.

«Նկատելով որ Միութեանս ներկայ տարեշրջանի մուտքը  
բաղդատաբար ելքին՝ շատ դժացուցիչ է, կը թելադրէ նո-  
րընտիր Կեդրոնական Գործադիր Մարմինի որ ամէն միջոց  
գործածէ եկամտուի նորանոր աղբիւրներ ստեղծելու, եւ եթէ  
հնարաւորութիւն կայ, ծախքերը պակսեցնէ՝ առանց գործին  
վնաս հասցնելու»:

5.- ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈՓՈՅՈՒԹԻՒՆ

Նախորդ Պատգամաւորական Ժողովը կանոնադրի վրայ  
բրած էր հետեւեալ յաւելումը.—

«Այն ընկերութիւնները որ նիւթապէս որոշ գումարներ  
կուտան Միութեանս անոնք իրաւունք պիտի ունենան  
ներկայացուցիչ ունենալ ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԳՅԻՍԱԿԱՆ ՄԻՈՒ-  
ԹԵԱՆ Կեդրոնական Գործադիր Մարմինի ժողովներուն մաս-  
նակցելու խորհրդականի հանգամանքով՝ առ նուազն երեք ա-  
միսն անգամ մը»:

Ներկայ Պատգամաւորական Ժողովը այս յաւելումը բա-  
րեփոխեց: Փոխանակ ըսելու «առ նուազն երեք ամիսն անգամ  
մը»՝ ըսելու է «ամէն մէկ ժողովի»:

6.- ՄԱՐԳԱՀԱՄԱՐԻ ՀԱՐՑ

Խարբերոյցներու մարդահամարը պատրաստելու հարցը  
նկատի առնուելով որոշուեցաւ յանձնել անոր գործադրութիւ-  
նը Կեդրոնական Գործադիր Մարմինի:

## ՆԻՍ ԵՐԿՐՈՐԴ

Երկրորդ նիստը բացուեցաւ ժամը 6.30-ին՝ մէկ ժամ դա-  
դարէ վերջ:

Բոլոր պատգամաւորները ներկայ էին ի բաց առեալ Յ.  
Ճօրճօրեան որ ստիպուած էր մեկնել՝ իր ձայնը տալով Արամ  
Եաղճեանի:

Այս նիստին օրակարգն էր յաւելեալ հարցերով միասին,  
հետեւեալը զոր Հարցեր Դասաւորող Յանձնախումբը ներկա-  
յացուց.

- 1.- Նախորդ նիստի արձանագրութեան ընթերցում եւ վաւե-  
րացում:
- 2.- Մասնաճիւղերու տեղեկագիրները:
- 3.- Երիտասարդաց եւ կանանց մասնաճիւղերու կազմութիւն:
- 4.- Հաշուեքննիչ Յանձնախումբի տեղեկագիրը եւ պիւտձէի  
հարց:
- 5.- Կանոնադրի փոփոխութիւն:
- 6.- Խարբերոցիներու մարդահամարը:
- 7.- Ընտրութիւն Կեդրոնական Գործադիր Մարմինի:
- 8.- Գնահատում եւ շնորհակալութիւններ:

1.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՒ ՎԱԻԵՐԱՑՈՒՄ  
Նախորդ նիստի արձանագրութիւնը կարգացուելով նոյ-  
նութեամբ վաւերացուեցաւ:

### 2.- ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐԸ

102 ԷՆՃԼԼԸՄԻ մասնաճիւղը բացառաբար յառաջ տարած  
էր Միութեան գործերը խիստ կանոնաւորութեամբ եւ ճշգր-  
պահութեամբ եւ զրկած էր §290.75:

ՊՈՍԹՈՆԻ մասնաճիւղը ունեցած էր երեք մեծ ձեռնարկ-  
ներ, եւ ապահոված էր մեծագոյն դումարը՝ §1028.53:

ՆԻԻ ԵՕՐԻԻ մասնաճիւղը կազմած էր Երիտասարդներու  
Հատուած մը: Ղրկած էր յաջորդ բարձրագոյն դումարը՝  
§875.50:

ԼԻՆը զրկած էր 100 տոլար՝ հակառակ տնտեսական ծանր  
տագնապին, եւ ունէր զանձին մէջ 100 տոլարէն աւելի դու-  
մար մը:

ՈՒՍՏՐը ունեցած էր յաջող դաշտահանդէս մը: Ղրկած էր  
§473.50:

ՀԱՐԹՃԸՐՏԻ յաջող դաշտահանդէսին զուտ հասոյթը ե-  
ղած էր §257.50:

3.- ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՕԺԱՆԳԱԿ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ  
Որոշուեցաւ կազմել Երիտասարդաց եւ Կանանց Օժանդակ  
Մասնաճիւղեր: Այս որոշումին գործադրութիւնը թողուեցաւ  
նորընտիր Կեդրոնական Գործադիր Մարմինի:

### 4.- ՀԱՇՈՒԵԿՆԻՒ ԵՒ ՊԻԻՏՃԷ

Հաշուեքննիչ Յանձնախումբը տեղեկագրեց որ հաշիւները  
մանրակրկիտ քննութեան ենթարկելի վերջ՝ ճիշդ գտած եւ  
վաւերացուցած էր:

Սակայն ժողովը հաշուեկշիւի յարուցած մէկ խնդիրը,  
այն է պիւտձէի խնդիրը, վեր առաւ, եւ երկար վիճաբանու-  
թիւններէ վերջ հետեւեալ բանաձեւը մեծամասնութեամբ վա-  
ւերացուց.

«Նկատելով որ Միութեանս ներկայ տարեշրջանի մուտքը  
բաղդատաբար ելքին՝ շատ դժացուցիչ է, կը թելադրէ նո-  
րընտիր Կեդրոնական Գործադիր Մարմինի որ ամէն մէջոց  
գործածէ եկամտի նորանոր աղբիւրներ ստեղծելու, եւ եթէ  
հնարաւորութիւն կայ, ծախքերը պակսեցնէ՝ առանց գործին  
վնաս հասցնելու»:

### 5.- ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Նախորդ Պատգամաւորական ժողովը կանոնադրի վրայ  
ըրած էր հետեւեալ յաւելումը.—

«Այն ընկերութիւնները որ նիւթապէս որոշ դումարներ  
կուտան Միութեանս անոնք իրաւունք պիտի ունենան  
ներկայացուցիչ ունենալ ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԻԳԻՅԱԿԱՆ ՄԻՈՒ-  
ԹԵԱՆ Կեդրոնական Գործադիր Մարմինի ժողովներուն մաս-  
նակցելու խորհրդակցանի հանգամանքով՝ առ նուազն երեք ա-  
միսն անգամ մը»:

Ներկայ Պատգամաւորական ժողովը այս յաւելումը բա-  
րեփոխեց: Փոխանակ ըսելու «առ նուազն երեք ամիսն անգամ  
մը»՝ ըսելու է «ամէն մէկ ժողովի»:

### 6.- ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՐՑ

Խարբերոցիներու մարդահամարը պատրաստելու հարցը  
նկատի առնուելով որոշուեցաւ յանձնել անոր գործադրութիւ-  
նը Կեդրոնական Գործադիր Մարմինի:

7.- ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ

Ընտրական Յանձնախումբը ներկայացուց ընտրելիներու եռադատիկ ցանկ մը, որմէ ընտրուեցան հետեւեալները իբրև անդամ Կեդրոնական Գործադիր Մարմինի 1931-1932 տարե- շըրջանի համար.—

Տօքթ. Յ. Ծովիկեան, Սարգիս Կօչկարեան, Յ. Խօլլիկեան, Եղիա Գղիբեան, Տիգրան Էքմէքճեան, Յարէթ Մ. Փիլիպոսեան, Յ. Նահիկեան, Մարտիրոս Տէր Յովհաննէսեան եւ Կարապետ Ղազարոսեան: Յաջորդ առաւելագոյն քուէ ստացողն էր Յակոբ Բարեջանեան:

8.- ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱՌԹԻՒՆՆԵՐ

Որոշուեցաւ զնահատում եւ շնորհակալութիւն յայտնել հետեւեալ մարմիններու եւ անձանց.—

- 1.- Խ. Հայաստանի կառավարութեան:
  - 2.- Խ. Հայաստանի ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԳՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ներկայացուցիչներու:
  - 3.- Միութեան Կեդրոնական Գործադիր Մարմինի ամբողջ կազմին:
  - 4.- Քարտուղարութեան:
  - 5.- Գանձապահին:
  - 6.- Պարսամեան-Մուճի Ընկերութեան, իրենց ընձեռած գրասենեակի եւ ժողովներու ղեկըութիւններուն եւ զոհողութեանց համար:
  - 7.- Պոսթոնի Մասնաճիւղի, իրենց ցուցուցած հիւրասիրութեան համար:
- Եւ նկատի առնելով Միութեան ատենապետին, Տօքթ. Յ. Ծովիկեանի, երեք տարուան ժրաջան եւ օգտակար ծառայութիւնները, Չորրորդ Պատգամաւորական Ժողովը միաձայնութեամբ քննարկեց ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳԻ մէջ փողոց մը անոր անուամբ յորջորջել, եւ այս որոշումը հաստատուել Խ. Հայաստանի ներկայացուցիչներուն:
- Չորրորդ Պատգամաւորական Ժողովը վերջացաւ ղեկերուան ժամը 11-ին:

Ատենադպիր  
ՄԻՍԱԲ ՏԷՐ ՊԱՂՏԱՍՍՐԵԱՆ

Ատենապետ  
Գ. Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Բ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԳՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԻ

Ներկայացուած

Չորրորդ Պատգամաւորական Ժողովի  
Գումարեալ Մարտ 15, 1931, ի Քէյմպրիճ, Մէս.

(Մարտ 16, 1930-էն մինչեւ Մարտ 15, 1931)

Պատուարժան Պատգամաւորներ Համա-Խարբերուցիական Միութեան Չորրորդ Պատգամաւորական Ժողովի,  
Կեդրոնական Գործադիր Մարմինի անդամները, որ վարեցին Միութեանս գործերը Մարտ 17, 1930-էն մինչեւ Մարտ 14, 1931, հետեւեալներն էին.

- Տօքթ. Յովհաննէս Ծովիկեան՝ Ատենապետ
- Յարէթ Մ. Փիլիպոսեան՝ Ատենադպիր:
- Սարգիս Կօչկարեան՝ Գանձապահ:
- Տիգրան Էքմէքճեան՝ Հաշուակալ:
- Յովհաննէս Նահիկեան՝ Խորհրդական:
- Գարեգին Պօղոսեան՝ Խորհրդական:
- Եղիա Գղիբեան՝ Խորհրդական:
- Յարութիւն Խօլլիկեան՝ Խորհրդական:
- Գրիգոր Կէօկէրեան՝ Խորհրդական:

1.- ԺՈՂՈՎՆԵՐ

Կեդրոնական Գործադիր Մարմինը տարուան մը ընթացքին ունեցած է 15 կանոնաւոր ժողովներ, եւ մէկ խորհրդակցական ժողով երեք ընկերութիւններու Կեդրոնական Վարչութեանց հետ:

Ընկերութիւններն էին Փրավիտէնսէն՝ Խարբերիկ Կրթասիրացը, Հիւսէյնիկի Վերաշինացը եւ Քեսիրիկի Ընդհանուր Միութիւնը: Այս ժողովը գումարուեցաւ սոյն ընկերութիւններու խնդրանքին վրայ՝ աւելի մօտէն տեղեակ ըլլալու Միութեան գործերուն: Ժողովը շատ արդիւնաբեր եղաւ: Տրուած լուսարանութիւններէն եւ բացատրութիւններէն վերջ՝ երեք ընկերութիւններն ալ խոստացան թէ՛ նիւթական նպաստներ տալ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳԻ համար եւ թէ՛ միասնաբար գործել Միութեանս ձեռնարկի յաջողութեան համար:

112

## 2.- ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Կը ցաւինք որ մասնաձեւեր այս շրջանին մէջ ցուցուցած չեն այն եռանդը եւ դորձունէութիւնը որ ցուցուցին նախորդ շրջանին մէջ: Թէպէտ հին մասնաձեւեր իրենց սովորական եռանդէն բան մը կորսնցուցին, սակայն երբեք չզաղբեցան դորձեր եւ ձեռնարկներ ընելէ: Ամենամեծ անտարբերութիւնը երեսն եկաւ նորակազմ մասնաձեւերու մէջ: Օրինակ. Շիքա-կօյի, Հէյրհիլի եւ Տիթրօյթի մասնաձեւերը, որոնք իրապէս ոչինչ ըրին:

Այն ընդհանուր անասական տաղնապը որ կը տիրէ Ամերիկայի մէջ իր որոշ եւ զգալի ազդեցութիւնը ունեցաւ իրերը այս վիճակին հասցնելու:

## 3.- ԴՐԱՄԱՀԱՒԱՔՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Միութիւնս որ բացած էր 100,000 տոլարի Գէմբէյն մը երկու տարի առաջ՝ շատ դանդաղ շարժեցաւ: Անհատական դիմումներ թէպէտ եղան, սակայն արդիւնքը փոքր եղաւ: Այսու ամենայնիւ պարագաներէն ստիպեալ մասնաւոր ուշադրութիւն տրուեցաւ անցալի խոստումները դանձելու: Մի քիչ բացառութեամբ՝ խոստացողներէ շատեր իրենց խոստումները յարգեցին, եւ մաս առ մաս տալով իրենց հաշիւները փակեցին: Կը յուսանք որ մնացած սպառիկները նաեւ պիտի դանձուին շատ շանցած:

## 4.- ԸՆԴՀԱՆՐԱՍՏԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Նկատելով որ անհատական դիմումները ապարդիւն կը մընան, ուժ տրուեցաւ ընդհանրական ձեռնարկներու:

Նախ, Կեդրոնս աշխատեցաւ դաշտահանդէսներու թիւը շատցնել: Այս շրջանին մէջ Միութիւնս ունեցաւ հինգ տարբեր տեղերու մէջ դաշտահանդէսներ: Պոսթոն, Ուստը, Հարթֆըրա, Ֆրէզնօ եւ Լօյ Էնճըլըս: Իսկ Փրայմաքսի մէջ Խարբերդի Կրթասիրացը ունեցաւ դաշտահանդէս մը, որուն հասոյթին կէսը (§246.19), ըստ այդ ընկերութեան որոշումին՝ յատկացուեցաւ Միութեանս ձեռնարկին: Մօտաւորապէս 1000 տոլար գումար հասոյթ գոյաշաւ այս դաշտահանդէսներէն:

Երկրորդ, Շարժական Պատկերներ ցուցադրել յարմար տեսնուեցաւ: Կը ցաւինք տեղեկագրելու որ ակնկալեալ արդիւնքը չկրցինք ձեռք ձգել: Այս անյաջողութեան պատճառները մէկէ աւելի են:

Երրորդ, վիճակահանութեան մը ձեռնարկեցինք: 1250 դրքոյկներ, իւրաքանչիւր դիրք շուրս 25 սէնթոնց տոմսակներ պարունակող, հրատարակ հանեցինք ու ցրուեցինք բոլոր մասնաձեւերու: Տակաւին որոշ տեղեկութիւն մը չունինք թէ որքանը սպառած են:

Չորրորդ, ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ տարեգիրքը՝ պատկերազարդ, հրատարակեցինք. 2000 օրինակ: Իւրաքանչիւր օրինակ 7 սէնթ ծախքով: Մեր նպատակը այս դրքոյկը հանելու երկու էր: Նախ, Ժողովուրդը տեղեկ պահել ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ շինարարական դորձերուն, եւ երկրորդ՝ իւրաքանչիւր օրինակ 25 սէնթի ծախելով կոկիկ հասոյթ մը ապահովել: Եթէ 1600 օրինակ միայն ծախուի այդ դնով, 400 սոլար ապահոված կ'ըլլանք: Եւ դժուար չէ անոնց սպառումը, եթէ աշխատողներ ըլլան:

## 5.- ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Նախորդ Պատգամաւորական Ժողովը 4 որոշումներ քուէարկեց որոնց դորձադրումին համար Կեդրոնս իր կարելին ըրած է:

Նախ, Ամերիկայի մէջ դորձիչ ունենալ: Շահան Նաթալիի յանձնուեցաւ այդ պաշտօնը: 10 շաբաթ հաւատարմաբար աշխատել վերջ՝ նա հրաժարեցաւ:

Երկրորդ, ներդադրել վութացնել: Հարցարաններ ցըրուած ենք այլեւայլ հայաշատ կեդրոններ, եւ շրջաբերականներու մէջ շեշտուած է անոնց կարեւորութիւնը: 45 անձերու ներգաղթին համար դիմում կատարեցինք Հայկական կառավարութեան: Մոսկուայի կառավարութեան կողմէն անոնց մուտքը արածուած է:

Երրորդ, ճարտարարուեստի հաստատումը ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ մէջ: Հայաստանի մեր ներկայացուցիչները գրեցին մեզ որ դիւղատնտեսութիւնը բաւական եւ յարմար կը համարին Խարբերդի ներդադրողներուն համար, եւ որեւէ ճարտարարուեստի հաստատումը ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ մէջ աւելորդ կը համարին:

Չորրորդ, դպրոցի մը շինութիւնը: Արդէն ծանօթ է շատերուդ որ դպրոցի մը դրամը կը մնայ Հ. Բ. Ը. Միութեան քով, հանգուցեալ Մկրտիչ Հաճի Յովհաննէսեանի կտակած գումարը: Մեր թափած աշխատանքները այդ դրամը իր նպատակին դորձածուելու համար ապարդիւն անցած չեն: Ուրախ ենք ըսելու որ մեր կրկնակի դիմումներուն վրայ՝ Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովը որոշած

է անմիջապէս զբեւ Բարիդի Կեդրոնական Վարչութեան որպէս զի այդ գումարը յանձնուի ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐԳՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ դպրոցի հիմնարկութեան սկսելու համար, եւ կամ Բարեգործականը ինք ձեռնարկէ դպրոցի կառուցման, առանց ուրիշ խնդիրներ յարուցանելու, քանի որ կտակը այնքան որոշ եւ յստակ է: Կը յուսանք որ Կեդրոնիս հետապնդումներովը միանգամ ընդ միշտ այս առկախ խնդիրը իր գոհացուցիչ լուծումը պիտի գտնէ:

#### 6.- ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Նկատելով որ Միութեանս արխիւները եւ գոյքերը օր ըստ օրէ կը բազմապատկուին, եւ անոնց պահպանումը եւ կարգաւորումը անհրաժեշտութիւն մ'է, յարմար սեպեցինք երկաթեայ Փայլ մը ունենալ եւ ամէն ինչ հոն դետեղել իրենց կարգովը: Արդ հոն կը պահուին բոլոր արձանագրութիւնները, պաշտօնական գրութիւնները եւ թղթակցութիւնները — Հայաստանի ներկայացուցիչներուն, Ամթօրի, եւ Միութեանս հաշիւները, ապառիկները, ոսկեմատեանը, փոխան ծաղկեպղտակի տրուած նուէրներու արձանագրութիւնները, մասնաճիւղերէ ստացուած նամակները ու անոնց պատասխանները: 20 տարբեր գլուխներու տակ ամէնը կարգաւորուած: Միութիւնս այս իր ընդարձակ դործերը յառաջ կը տանի առանց վճարելու սենեակի, թէլէֆոնի, եւ ելեքտրիկի պիւլեր:

#### 7.- Խ. ՀԱՅԱՍՏԱՆ ԴՐԿՈՒԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ

Այս անցեալ շրջանին միայն 200 տուար զուտ զբաղ զրկուած է Խ. Հայաստան: Իսկ ապրանքներ փոխան դրամի զրկուած են 7,425 տուար 79 սէնթի արժողութեամբ: Դրկած ենք 1 Քատիլաք, 2 Պուելք, 3 Տաճ թրքք, 1 թրէքթօր, 2 մօթօր սայթըլ եւ 1 թայիրայթըր: Այս ապրանքները հոն կը ծախուին եւ զբաղի կը վերածուին խիստ շահաւէտ եղանակաւ մը: Մեր ներկայացուցիչներուն դիմումին շնորհիւ Հայկական Կառավարութիւնը Մոսկուայէն թոյլտուութիւն ստացած է մեզի համար մինչեւ 50,000 տուարի արժողութեամբ ապրանքներ Ամերիկայէն փոխանցել Հայաստան: Աւելորդ կը համարինք մանրամասնութեանց մտնել, միայն կ'ուզենք շեշտել որ մեզի տրուած նուէրները ունեցած են իրենց բարձրագոյն արժէքները, եւ այդ իսկ պատճառաւ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳՅԻ շինութիւնը յառաջ կը տարուի անընդհատ՝ անտեսական տալնապի այս օրերուն:

Մինչեւ հիմա Խ. Հայաստան զրկուած է 27,098.75 տուար, որուն մէկ մասը զրկուած է զուտ զբաղ, իսկ միւս մասը իբրեւ ապրանք:

#### 8.- ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳԸ

Այն զբաղը, որուն մասին ակնարկ մը եղաւ, կը պարունակէ ընդարձակ տեղեկութիւններ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳՅԻ մասին: Քաղաքին մէջ շինուած են 3 էփարթմընթներ, 4-րդի մը հիմերը զրուած են: 100-էն աւելի անձանց բաւականաչափ բնակարաններ արդէն պատրաստ են:

Ջրանցքը, որ արժած է 27,000 տուրլի, անցեալ Մարտէն սկսեալ գործածութեան մէջ է:

Վերջերս ստացանք ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳՅԻ ջրանցքին, ընդարձակ հողին, տուներուն եւ բնակիչներուն պատկերները, զորս հրապարակ զբաղ ենք տարեկան զբաղակի մէջ: Ինչ յաւելումներ որ ըլլան յետ այսու իւրաքանչիւր տարուան ընթացքին՝ կարեւոր է որ հրատարակուին ու ցրուուին ժողովուրդին մէջ:

#### 9.- ԲԱՐԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Միութեանս կազմութեանն ի վեր՝ մահերու առթիւ փոխան ծաղկեպղտակի եղած հանդանակութիւններէն զոյացած է առաւել քան 5000 տուար: Ընդամէնը 56 արձանագրութիւններ ունեցած ենք: Այս տարի 1000 տուարէն աւելի մուտք ունեցած ենք ծաղկեպղտակներու փոխարէն տրուած նուիրատուութիւններէ: Ասկից շատ աւելի մեծ գումար մը ունեցած պիտի ըլլայինք, եթէ այլեւայլ կազմակերպութիւններ չընէին ջանքեր՝ տրուած նուիրատուութիւններէն իրենց բաժիններ հանելու: Եթէ նախանձախնդիր Խարբերողներ Ամերիկայի մէջ որդեգրեն նուէրներ տալու այս կերպը, մեր Յիշատակարանի բաժինը աւելի ընդարձակ եւ ճոխ պիտի ըլլայ: Շատ բնական է որ Խարբերողներ յիշեն ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳՅԻ եւ ուզեն անոր համար բան մը ընել: Այս բարի սովորութիւնը Խարբերողներ առանց բացառութեան, եթէ կարելի է, որդեգրելու են թէ՛ ի պատիւ ննջեցեալներու եւ թէ՛ ի նպաստ իրենց բնագաւառին: Կ'արժէ որ պատուարժան պատգամաւորներ այս խնդիրը յանձնեն իրենց ներկայացուցած մարմիններուն:

#### 10. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑՆԵՐԸ

Կեդրոնս բնաւ պատեհութիւն փախցուցած չէ Ուսումնասիրացներու ուշադրութիւնը ՆՈՐ ԽԱՐԲԵՐԳՅԻ դարձնելու: Ու-

րախ ենք որ շատեր ինքնաբերաբար հետաքրքրուած են և խընդ-  
րած են մենէ տեղեկութիւններ :

Միութեանս ատենապետը, Տօքթ. Յովհաննէս Մովսիսեան,  
մասնաւոր հրաւիրանօք ներկայ դտնուած է Դատէմի Ուսում-  
նասիրացի 40-րդ տարեդարձի տօնակատարութեան հանդէսին,  
և Երած է ուղերձ մը այդ ուղղութեամբ: Դարձեալ ներկայ  
դտնուած է Խոյլուի Ուսումնասիրացի բացառիկ ժողովին՝ պա-  
տասխանելու անոնց հարցումներուն :

Բազմաչէնի Ուսումնասիրացի Պատգամաւորական Ժողովին  
դիմում եղած է զբաւոր կերպով՝ խնդրելու անոնց աջակցու-  
թիւնը: Մեր ստացած տեղեկութեանց համաձայն՝ անոնց Պատ-  
գամաւորական Ժողովը յանձնարարած է նորընտիր Կեդրոնա-  
կան Վարչութեան որ յարաբերութեան մասնէ Միութեանս Կեդ-  
րոնին հետ ու ընէ ինչ որ ինք յարմար եւ արդարացի կը գտնէ :

Այսպիսի ջանքեր թափուած են յաճախ թէ՛ ուղղակի մեր  
կողմէն եւ թէ՛ Միութեանս համակիրներու կողմէն :

Երախտագիտութեամբ կը յայտարարենք որ երեք ընկե-  
րութիւններ մեծկակ գումարներ նուիրած են այս տարի նաեւ :  
Հիւսէյնիկի Վերաշինաց Միութիւնը նուիրեց 1200 տոլար (անց-  
եալ տարի նուիրած էր 1200, ընդամէնը՝ 2400 տոլար), Քեսի-  
րիկի Ընդհանուր Միութիւնը նուիրեց 1200 (անցեալ տարի նը-  
ւիրած էր 1200, ընդամէնը՝ 2400 տոլար), Խարբերդի Կրթա-  
սիրացը նաեւ նուիրեց 1200 տոլար: Յարդ Խարբերդի Կրթասի-  
րացը նուիրած է 10,026.54 տոլար՝ ընդամէնը: Արդէն նախորդ  
չրջաններուն մէջ՝ Հոգէի Ուսումնասիրացը նուիրած էր 1200  
տոլար եւ Իջմէի Միացեալ Ընկերութիւնը 2000 տոլար: Ուսում-  
նասիրացներէ ստացուած նուէրներու համագումարը մինչ թը-  
ւականս կը հասնի 18,000 տոլարի :

#### 11.- ԳԱՆՁԻՆ ՀԱՇԻԻԸ

Արդէն գանձապահը իր հաշիւը պիտի ներկայացնէ Պատգա-  
մաւորական Ժողովիդ: Միայն անցողակի յիշենք որ ընդհա-  
նուր մուտքը եղած է 11,309.88 տոլար, որուն 4025.73 տոլա-  
րը փոխանցուած է նախորդ շրջանէն :

Մեր ներկայացուցիչներու հաշուեկշիւը ամբողջութեամբ  
առ ձեռն չունինք: Իրենց հաշուեկշիւէն կը հասկցուի որ զրկը-  
ուած դրամներու եւ ծախուած ապրանքներու փոխարժէքներու  
համագումարն է 122,655 ուսուլի: Այս գումարին մէջ չէ 2 մօ-  
թօր սայքըններու փոխարժէքը, եւ ոչ ալ մեր վերջին դրկած 2

թրքներու փոխարժէքը: Վստահարար երբ այս ապրանքնե-  
րը նաեւ դրամի վերածուին, այն ատեն Հայաստանի մէջ մեր  
ներկայացուցիչներու տրամադրութեան տակ դրուած ամբող-  
ջական գումարը պիտի հասնի 150,000 ուսուլիի :

Ամերիկայի մէջ մեր գանձատունն է Սէքընտ Նէշընըլ Պէնք  
ալ Պոսթօն :

#### 12.- ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս վիթխարի ձեռնարկին յաջողութեան եւ յարատեւման  
համար Կեդրոնս կ'ընէ հետեւեալ թելագրութիւնները .

Նախ, բնաւ չյուսահատիլ Ուսումնասիրացիներու դուռերը  
բաղխելէ: Անոնք այսօր կամ վաղը լայն պիտի բանան իրենց  
դռները: Արդէն որբեր գոյութիւն չունին, զաղթականներ կը  
գետեղուին եւ կը հաստատուին աշխարհիս չորս անկիւնները:  
Ժամանակը պիտի դայ որ անցնող հայրենասէրներ իրենց պատ-  
կանած Ուսումնասիրացիներու գանձին դրամը ոչնչանալէ փըր-  
կելու համար պիտի յօժարին ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ յատկացնելու:  
Հակառակ սրարազային գանձերը պիտի իւրացուին այս կամ  
այն անհատներու կողմէն եւ կամ Ամերիկեան Կառավարու-  
թեան կողմէն :

Երկրորդ, աշխատելու է որ կտակներ ըլլան ի նպաստ ՆՈՐ  
ԽԱՐԲԵՐԴԻ: Մեռնող Խարբերդցիներ արդեօք կրնայի՞ն ընել  
աւելի մնայուն մեծ դործ մը քան յատկացնել իրենց հարստու-  
թեան կամ ստացուածքի մէկ մասը ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ:

Երրորդ, դիմելու է այն հարուստ Խարբերդցիներուն որոնք  
ստատօքէն նուիրած են Ամերիկեան հաստատութիւններու, եւ  
սակայն սէնթ մը իսկ նուիրած չեն ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ: Կեդրոնս  
զգուշացաւ այս շրջանին անոնց դիմում ընելէն, որովհետեւ  
այսպիսիք տնտեսական տագնապի պատճառաբանութեան  
պաշտպանութիւնը կը վայելին: Սակայն ժամանակը շատ հե-  
ռու չէ, երբ այս արգելքը պիտի վերցուի եւ մենք ազատ հա-  
մարձակ անոնց դիմում ընելու պիտի ստիպուինք:

Չորրորդ, ինչպէս անցեալ Պատգամաւորական Ժողովին  
թելագրեցինք, հիմա դարձեալ կը թելագրենք որ ընդհանրա-  
կան ձեռնարկները բազմապատկուին: ՀարթՓըրտ որ բոլոր-  
վին անգործ եւ անտարբեր մնացած էր նախորդ երկու տարի-  
ները, Շահան Նաթալիի ջանքերուն շնորհիւ այս տարի դաշ-  
տահանդէս մը ունեցաւ եւ ապահովեց \$257.50-ի գումար մը  
ու փոխանցեց Կեդրոն: Պատճառ մը չկայ բնաւ որ այսպիսի

ձեռնարկներ չըլլան նաև ուրիշ վայրեր ուր Խարբերոցիներու համայնք մը գոյութիւն ունի :

Հինգերորդ, Կեդրոնիս կողմէն ձեռնարկուած եւ յանձնարարուած գործեր քաջալերուելու են մասնաճիւղերու կողմէն : Այս շրջանի մէջ ղրկուած են 7 շրջարեւականներ մասնաճիւղերու այլեւայլ խնդիրներու առթիւ : Այդ շրջարեւականներու առաջարկներէն եւ խնդիրքներէն շատեր սեղանի վրայ մնացած են : Այսպիսի մեծ ձեռնարկներ մի քանի անհատներով միայն կարելի չէ յառաջ տանիլ : Հաւաքական ջանքերը հրաշքներ կրնան գործել :

Արդ, պատուարժան Պատգամաւորներ, ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՑԻ ձեռնարկը մեծ ջանքերէ եւ զոհողութիւններէ վերջ, հասած է այն տեղը ուրիշ ետ դառնալ անկարելի է նախանձախնդիր եւ պատուաւոր Խարբերոցիներու համար : Մենք կը հաւատանք որ ճշմարիտ հայրենասէրներ բնաւ սլիտի չլքեն այս նուիրական գործը : Միայն մեր փափաքն է որ բազում Խարբերոցիներ լրծուին այս հոյակապ եւ պատուաբեր ձեռնարկին, որպէս զի ցոցընենք մեր բարեկամներուն եւ համակիրներուն որ Խարբերոցին դիտէ գործ մը ղլլուի հանելու կերպը, եւ ունի նաև կամքը :

Այս պատեհ առթիւ կը յայտնենք մեր խորին երախտագիտութիւնը բոլոր այն անհատներուն եւ կազմակերպութեանց որ իրենց նուէրներովը եւ բարոյական քաջալերութեամբը չափով մը դիւրացուցին մեր ծանր գործը :


Խ. Հայաստանի Կառավարութեան խիստ բարեացակամ վերաբերմունքը եւ մեր Հայաստանի ներկայացուցիչներուն անձնուէր զոհողութիւնները մեզի եղած են մղիչ ուժ մը անսայթաք յառաջ ընթանալու՝ երախտագիտական ջերմ զգացումով մը :

Կը մաղթենք որ այս 4-րդ Պատգամաւորական Ժողովը ըլլայ աւելի արդիւնաւոր քան նախորդները :

Ի դիմաց ՀԱՄԱ-ԽԱՐԲԵՐՈՑԻՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՄԻՐ ՄԱՐՄԻՆԻ

Ատեմապիր ՅԱԲԵԹ Մ. ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

Ատեմապետ ՏՕՔ. ՅՈՎ. ԾՈՎԻԿԵԱՆ



ԳՐԱՍԵՆՆԱԿԻ ՀԱՍՑԷ

GENERAL UNION OF HARPOOT

463 Park Sq. Building

Boston, Mass.

ՆՈՒԷՐՆԵՐ ՂՐԿՈՒԵԼՈՒ ԵՆ ԶԷՔՈՎ ԵՒ ԿԱՍ

ՓՕՍԹ ՕՖԻՍ ՄԸՆԻ ՕՐՏԸՐՈՎ ՎՃԱՐԵԼԻՒ

GENERAL UNION OF HARPOOT-Ի ՀՐԱՄԱՆԻՆ

2013



